ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-05-17/18

ք. Երևան **«25» մայիսի 2017թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էդնա տուռ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն.Խաչատրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար պաշտոնական պատվիրակությունների ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 30 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 6 202 000 (վեց միլիոն երկու հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրր հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

(ստորագրություն)Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էդնատուր» ՍՊԸ
Ք.Երևան, Բաղրամյան 1
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220113331452000
ՀՎՀՀ 03534575
«Էդնատուր» ՍՊԸ տնօրեն՝

Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ստորագրություն)Կ.Տ

Հավելված 1
«25» մայիսի 2017 թ կնքված
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-05-17/18
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայություն*					
Հ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Ծառայության ընդհանուր առավելագույն գումարը /ՀՀ դրամ/	Մատուցմանման ժամկետը և վայրը	Վճարման պայմանները
		Դիմավորման և ճանապարհման ծառայություններ «Զվարթնոց» օդանավակայանում պաշտոնական պատվիրակությունների նախարարական սրահով հյուրերի դիմավորման և ճանապարհման համար վճարումների իրականացում՝ առավելագույնը 35 հոգի:	175 000	**Ժամկետ՝** 1. Ժամանում՝ 2017թ մայիսի 29-30, մեկնում՝ 2017թ հունիսի 1-2 **Վայր՝** 1.«Զվարթնոց» օդանավակայան	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո՝ 20 բանկային օրվա ընթացքում
		1.**«Տեղափոխման ծառայություններ** Զվարթնոց» օդանավակայանից մասնակիցների տեղափոխում «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» և հակառակ ուղղությամբ: Հյուրերի թվաքանակը՝ առավելագույն 35 հոգի: Ժամանող և մեկնող մասնակիցների փոխադրումը պետք է կազմակերպվի՝ մասամբ անհատապես և մասամբ խմբային (տարբեր թվաքանակի խմբերով)՝ ելնելով նրանց ուղևորությունների չվացուցակից: Վերջինս կտրամադրվի միջոցառումից 1 շաբաթ առաջ: Փոխադրամիջոցները պետք է լինեն ներկայացուցչական կարգի 2 միկրոավտոբուս:	260 000	**Ժամկետ՝** 1. Ժամանում՝ 2017թ մայիսի 29-30, մեկնում՝ 2017թ հունիսի 1-2 **Վայր՝** 1.«Զվարթնոց» օդանավակայան-«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց»և հակառակը	
		2. Մասնակիցների տեղափոխման ծառայություններ՝ 1.«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» - ք. Ծաղկաձոր-«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց», 2.«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» - Գառնի-Գեղարդ-«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց», 3.«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» - ք. Երևան-«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» 4.«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» - Սևան-«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» երթուղիներով: Փոխադրամիջոցները պետք է լինեն ներկայացուցչական կարգի 2 միկրոավտոբուս:	700 000	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 29-ից հունիսի 1, **Վայրը՝** «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց»	
		Հյուրանոցային համարների ամրագրում «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց», 1 լյուքս սենյակ (30.05-02.06) 3 գիշեր	567 000	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 30-ից հունիսի 2, **Վայրը՝** «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց»	
		Հյուրանոցային համարների ամրագրում «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» 3 սենյակներքոթեջում, (29.05-02.06), 4 գիշեր	400 000	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 29-ից հունիսի 2, **Վայրը՝** «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց»	
		Դահլիճի վարձակալություն, «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոցի» նիստերի փոքր դահլիճ - 2017թ. մայիսի 30-ին և մայիսի 31-ին, որն իր մեջ ներառում է 2 համակարգիչ (notebook), բազմաֆունկցիոնալ տպիչ սարք(գունավոր տպիչ, բազմացնող սարք և սկաներ,	100 000	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 30-ից հունիսի 1, **Վայրը՝** «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց»	
		«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոցի» նիստերի մեծ դահլիճ- 2017թ. հունիսի 1-ին, որն իր մեջ ներառում է՝ 2 համակարգիչ (notebook), բազմաֆունկցիոնալ տպիչ սարք(գունավոր տպիչ, բազմացնող սարք և սկաներ)	200 000		
		Պատվիրակության անդամների սննդի ապահովում, այդ թվում՝		**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 29, **Վայրը՝** Ք. Ծաղկաձոր	
		1.«Բուրմունք» ռեստորանային համալիր, ք. Ծաղկաձոր – 2017թ. մայիսի 29 (ճաշ՝ առավելագույնը 50 հոգու համար), Джентльмены удачи» ռեստորանային համալիր, ք. Ծաղկաձոր - 2017թ. մայիսի 29 (ընթրիք՝ առավելագույնը 50 հոգու համար),	400 000		

		2.«Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց»- 2017 թ. մայիսի 30-ին (ճաշ՝ առավելագույնը 60 հոգու համար), «Գեղարդ» ռեստորանային համալիր - 2017 թ. մայիսի 30-ին (ընթրիք՝ առավելագույնը 60 հոգու համար),	**480 000**	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 30, **Վայրը՝** Ք. Ծաղկաձոր,	
		3.«Արարատ» ռեստորանային համալիր, ք.Երևան - 2017 թ. մայիսի 31-ին (ճաշ՝ առավելագույնը 15 հոգու համար, ղեկավար կազմ), «Կովկասի գերուհի» ռեստորանային համալիր, ք. Ծաղկաձոր - 2017 թ. մայիսի 31-ին (ճաշ՝ առավելագույնը 40 հոգու համար, փորձագիտական կազմ), «Յանս» ակումբ, ք.Երևան - 2017 թ. մայիսի 31-ին (ընթրիք՝ առավելագույնը 60 հոգու համար),	**480 000**	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 31, **Վայրը՝** Ք. Երևան,	
		4.Սևան (սննդի ապահովում/ ֆուրշետ, Ճաշացանկը կատարողին կտրամադրվի լրացուցիչ) - 2017թ. հունիսի 1 (ճաշ՝ առավելագույնը 60 հոգու համար),	**480 000**	**Ժամկետ՝** 2017 թ. Հունիսի 1, **Վայրը՝** Ք. Սևան,	
		Պաշտոնական ընթրիք «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց»- 2017 թ. հունիսի 1 (առավելագույնը 60 հոգու համար)	**750 000**	**Ժամկետ՝** 2017 թ. Հունիսի 1, **Վայրը՝** «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց»	
		Էքսկուրսիաների կազմակերպման ծառայություններ,			
		Էքսկուրսավարի ուղեկցությամբ խմբային այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր. Փոխադրումը պետք է իրականացվին ներկայացուցչական կարգի 2 միկրոավտոբուսներով: Խմբերի քանակը՝ 1 կամ 2, յուրաքանչյուրը բաղկացած 25 անձից: Էքսկուրսիան պետք է վարվի ռուսերենով , նպատակային լսարանը՝ ոչ մասնագիտական, բարձրագույն կրթությամբ, ԱՊՀ պետությունների միջին օղակի պետական ծառայողներ: Հուշարձանների/թանգարանների մուտքի վարձը հոգում է Կատարողը : **Այդ թվում՝**			
		1. Կեչառիս վանք. համալիր և Օրբելի եղբայրների տուն-թանգարան, ճոպանուղի -2017 թ. մայիսի 29 (առավելագույնը 30 հոգու համար,1 խումբ),	**45 000**	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 29, **Վայրը՝** Ք. Ծաղկաձոր	
		2. Գառնի-Գեղարդ - 2017թ. մայիսի 30-ին (Տեղափոխումը՝Ծաղկաձոր - Գառնի-Գեղարդ -Ծաղկաձոր), առավելագույնը 50 հոգու համար, 2 խումբ, յուրաքանչյուրը բաղկացած 25 անձից	**75 000**	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 30, **Վայրը՝** Գառնի-Գեղարդ	
		3. Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան, Երևանի կոնյակի գործարան, Զբոսանք Երևանում - 2017թ. մայիսի 31 (Տեղափոխումը՝ Ծաղկաձոր - Երևան -Ծաղկաձոր) առավելագույնը 15 հոգու համար, ղեկավար կազմ, 1 խումբ,	**97 500**	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 31, **Վայրը՝** Ք. Երևան,	
		4. Զբոսանք Երևանում - 2017թ. մայիսի 31 (Տեղափոխումը՝ Ծաղկաձոր - Երևան -Ծաղկաձոր) առավելագույնը 25 հոգու համար, փորձագիտական կազմ, 1 խումբ)	**25 000**	**Ժամկետ՝** 2017 թ. Մայիսի 31, **Վայրը՝** Ք. Երևան,	
		5.Սևանա լիճ - 2017թ. հունիսի 1, (Տեղափոխումը՝ Ծաղկաձոր -Սևան -Ծաղկաձոր), առավելագույնը 50 հոգու համար, 2 խումբ, յուրաքանչյուրը բաղկացած 25 անձից	**50 000**	**Ժամկետ՝** 2017 թ. Հունիսի 1, **Վայրը՝** Ք. Սևան,	
		Հուշանվերների տրամադրում, Քանակը՝ առավելագույնը 35-ի ածի համար: 1. Գինիներ (Karas Reserve -10 հատ, Karas-25 հատ) 2. Գիրք Հայաստանի մասին - 25 հատ: (Հուշանվերները պետք է նվիրված լինեն Հայաստանին՝ դրա միջազգայնորեն ճանաչելի մշակութային խորհրդանիշ(ներ)ին: «Armenia» բառի գրառման առկայությունը ոչ պարտադիր, սակայն ցանկալի է)	**280 000**	**Ժամկետ՝** մինչև 2017թ մայիսի 26-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
		Գրենական պիտույքներ (առավելագույնը 70 անձի համար)* 1. Գրիչ, կապույտ թանաքով,(նշագրմամբ) 80 հատ, 2. Անվանաքարտ (բեյջ), ժապավենով՝ նշագրմամբ 50 հատ, 3. Թղթապանակ, բարակ, ստվարաթղթե, A4 չափսի՝ նշագրմամբ, 50 հատ, 4. Նոթատետր, A5 չափսի, կոշտ կազմով, ≈50 էջ պարունակությամբ՝, նշագրմամբ- 80 հատ 5.Թուղթ - 3 տուփ, 6.Նվերների տոպրակ (նշագրմամբ) -80 հատ 7.CD սկավառակ -50 հատ Նշագրման տեքստը կատարողին կտրամադրվի լրացուցիչ:	**140 000**	**Ժամկետ՝** մինչև 2017թ մայիսի 26-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	

		Տպագրական աշխատանքներ Սեղանի ցուցանակների համար ներդիրների տպագրություն՝ 50 հատ: Սեղանի ցուցանակների համար ներդիրները պետք է լինեն 23x17 սմ չափսի, տպագրված՝ թղթի վրա, գունավոր, միակողմանի: Յուրաքանչյուր ներդրի վրա պետք է տպագրվի՝ կոնկրետ մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, պետության անվանումը և դրոշը:	**50 000**	**Ժամկետ՝** մինչև 2017թ մայիսի 26-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
		Միջոցառման ծրագրի տպագրություն (30 ղեկավար կազմ և 50 փորձագիտական կազմ): Ծրագիրը լրացուցիչ կտրամադրվի կատարողին:	**80 000**	**Ժամկետ՝** մինչև 2017թ մայիսի 26-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
		Մասնակիցների ընդհանուր լուսանկարների տպագրություն՝ 45 օրինակից: Լուսանկարները պետք է լինեն A4 չափսի, շրջանակով, ունենան տպագիր գրառում՝ միջոցառման անվանման, վայրի ու ժամանակահատվածի մասին: Լուսանկարները պետք է պատրաստ լինեն և տրամադրվեն պատվիրատուին՝ 01.06.2017թ. երեկոյան:	**67 500**	**Ժամկետ՝** մինչև 2017թ հունիսի 1-ը **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	
		Գովազդային վահանակներ (բաններներ) Քանակը՝ 2 հատ: Վահանակները պետք է լինեն շարժական՝ ≈95x170 սմ չափսի,, պատրաստված բաններային կտորից (շերտից), և ունենան համապատասխան հարմարանքներ, պաստառի վրա գունավոր տպագրված՝ միջոցառման անվանումը և անցկացման վայրն ու ժամկետը:	**300 000**	**Ժամկետ՝** մինչև 2017թ. մայիսի 26-ը. **Վայր՝**ք. Երևան, Մ.Խորենացի 3-7	

*Գնումն իրականացնելիս հիմք է ընդունվում ՀՀ կառավարության 10.09.2009թ.N 1036-Ն որոշումը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

(ստորագրությունը)

ԿԱՏԱՐՈՂ

«Էդնատուռ» ՍՊԸ
Ք.Երևան, Բաղրամյան 1
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220113331452000
ՀՎՀՀ 03534575
«Էդնատուռ» ՍՊԸ տնօրեն՝

Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ստորագրությունը)

Հավելված 2
«25» մայիսի 2017 թ կնքված
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-05-17/18
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017թ.արտաբյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2017 թ. դեկտեմբերի 25-ը	Ընդամենը տարի
1	4237	**Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայություններ**						4 960 000	6 202 000	6 202 000	6 202 000	**6 202 000**	**6 202 000**	**6 202 000**	**6 202 000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

(ստորագրություն)Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էդնատուր» ՍՊԸ
Ք.Երևան, Բաղրամյան 1
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220113331452000
ՀՎՀՀ 03534575
«Էդնատուր» ՍՊԸ տնօրեն՝

Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ստորագրություն)Կ.Տ

Հավելված 3
«25» մայիսի 2017 թ կնքված
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-05-17/18
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագր
կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչ
N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում ե
սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«25» մայիսի 2017 թ կնքված
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-05-17/18
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ

ազգանուն, անուն

ստորագրություն